ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**14.02.2022թ. կնքված N «ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/01-01»**

**գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

ի. Ակունք «29» 02 2024թ.

Ակունքի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Հ. Ռուբենյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԴԵԼՏԱՇԻՆ»ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Վ.Կոբեյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի և «ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 14.02.2024թ. կնքված N «ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/01-01» գնման պայմանագրի 7-րդ կետի 7.5-րդ և 7.13-րդ ենթակետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «*Նոր գյուղ բնակավայրի 12-րդ բնակավայրի ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման*» աշխատանքների կատարում: Պատվիրատուն պարտավորվում է աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար՝Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն համաձայնագրի N1 հավելվածին՝ վճարման ժամանակացույցին համապատասխան:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է 14.02.2024թ թվականին կողմերի միջև ստորագրված Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| Ակունքի համայնքապետարան | «ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ |
| Կոտայքի մ.,Ակունք հ.Կենտրոնական խճ. 72 շ. ՀՎՀՀ 03546083 | ք. Երևան Արշակունյաց 50/1 ՀՎՀՀ 02277374 |
| Բանկը՝ ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան h/h 90010 2575058 | Բանկը՝Ամերիաբանկ ՓԲԸ h/h 1570050810520100 |
| Համայնքի ղեկավար Հ. Ռուբենյան | Տնօրեն՝ Վ. Կոբեյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
*«14» 02. 2024 թ. կնքված*
*« ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/01-01 » ծածկագրով պայմանագրում*
*Փոփոխություններ կատարելու նպատակով*
*29/01/2024թ կնքված համաձայնագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**150 000 (մեկ հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ

<table>
<tr><th colspan="8">Ծառայության</th></tr>
<tr><th rowspan="2">հրավերով նախատեսված չափաբաժնի համարը</th><th rowspan="2">գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)</th><th rowspan="2">Տեխնիկական բնութագիրը</th><th rowspan="2">չափման միավորը</th><th rowspan="2">ընդհանուր գինը /ՀՀդրամ</th><th rowspan="2">ընդհանուր քանակը</th><th colspan="2">մատուցման</th></tr>
<tr><th>հասցեն</th><th>Ժամկետը**</th></tr>
<tr><td>2</td><td>71241200/4</td><td>Նոր գյուղ բնակավայրի 12-րդ բնակավայրի ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում:<br>Ընդհանուր տեղեկություն. Նոր Գյուղ բնակավայրի ջրամատակարարաման ցանցը գտնվում է արաշ չափով բարվոք վիճակում: Բնակավայրի ջրամատակարարումը իրականացվում է Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից, գյուղի ջրամատակարարման բաշխիչ ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 10 կմ: 2024թ-ի սուբվենցիոն ծրագրով նախատեսվում է բնակավայրի 12-րդ փողոցում իրականացնել ասֆալտապատման աշխատանքներ: Փողոցի ջրագիծը գտնվում է քայքայված վիճակում անհրաժեշտ է այն փոխարինել նորով:<br><br>1. I-ին փուլ, նախնական նախագծի մշակում - Անհրաժեշտ է կատարել տեղանքի հանույթ և ինժեներաերկրաբանական հետազոտություն ըստ գործող նորմերի: Ինժեներաերկրաբանական հետազոտությունը անհրաժեշտ է իրականացնել համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության կողմից: Հանույթը իրականացնել Arm WGS-84 կոորդինատային համակարգով՝ համեմատել կադաստրային քարտեզի հետ: Նշել գոյություն ունեցող ինժեներական ցանցերը, անհրաժեշտության դեպքում ճշտել ոչ համայնքային պատկանելության տարածքներն ու</td><td>դրամ</td><td>150 000</td><td>1</td><td>Ակունք համայնք, Կենտրոնական խճուղի 72շ.</td><td>Պայմանագրին կից համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում</td></tr>
</table>

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | *կառույցները: Ուսումնասիրել ջրամատակարարման առկա ցանցը, իրականացնել հիդրավլիկական հաշվարկ ջրագծի տրամագծի որոշման համար: Բնակավայրի ջրահեռացման ցանցի էսքիզային նախագիծը համաձայնեցնել համայնքի ղեկավարի հետ:*<br><br>***2.II-րդ փուլ**, աշխատանքային նախագծի մշակում-ջրամատակարարման բաշխիչ ցանցի ամբողջական ուսումնասիրություն, Ջրապահանջի և հիդրավլիկական հաշվարկների իրականացում, փողոցային գծի տրամագծի ընտրություն և նյութերի հիմնավորում, փականային հանգույցների և հրշեջ հիդրանտի հորերի մշակում անհրաժեշտության դեպքում, ամբողջ գյուղի անհատական տների մուտքագծերի և ջրաչափական հորերի նախատեսում սահմանազատման կետում:*<br><br>***Այլ պահանջներ.** Նախագծային փաստաթղթերի կազմը, բովանդակությունը և նախագծային լուծումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին: Նախագծումն իրականացվում է բնակավայրի ամբողջական բաշխիչ ցանցի համար: Աշխատանքային գծագրերի մշակում AutoCAD համակարգչային ծրագրով,աշխատանքային ծավալների և նախահաշիվների կազմում Excel համակարգչային ծրագրով: Մշակված աշխատանքային նախագծի համաձայնեցում համայնքի ղեկավարի և ենթակառուցվածքները սպասարկող շահագրգիռ մարմինների հետ:*<br><br>*Նախագծման ընթացքում, նախագծման առաջադրանքում կարող են մտցվել մասնակի փոփոխություններ և ճշտումներ:*<br><br>Նախագիծը փորձաքննության ներկայացնում է պատվիրատուն:<br><br>Նախագծային փաստաթղթերը կընդունվեն պատվիրատուի կողմից միայն բոլոր անհրաժեշտ համաձայնեցումների և փորձաքննությունների դրական եզրակացության առկայության դեպքում: | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ***Աշխատանքային նախագծի կազմը.***<br><br>*Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան և պետք է ներառեն՝*<br><br>*ա/Ընդհանուր դրույթներ,ընդհանուր բացատրագիր,աշխատանքային գծագրեր և աշխատանքային ծավալներ.*<br><br>*բ/Շինարարության կազմակերպման տեխնիկական մասնագրեր.*<br><br>*գ/Նախահաշվային փաստաթղթեր և ծավալաթերթ-նախահաշիվ:*<br><br>***Աշխատանքային նախագծի փաթեթի տրամադրում***<br><br>*Նախագծային փաթեթի տրամադրում տպագրական 3 և էլեկտրոնային 1 օրինակներից:Կատարող ընկերությունը ծառայության դիմաց կվճարվի քաղաքաշինական փորձաքննության դրական եզրակացությունից հետո:*<br><br>***Նորմատիվային պահանջներ.***<br><br>• Ինժեներական հետազննումն իրականացնել ՀՀՇՆ I-2.01-99 շինարարական նորմերով և ГОСТ 32836-2014-ի, ГОСТ 33179-2014-ի ստանդարտներով սահմանված պահանջների համաձայն:<br>• Ինժեներաերկրաբանական հետազննումն իրականացնել ГОСТ 32868-2014-ի ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերի համաձայն:<br>• Տեղագրագեոդեզիական հետազննումն իրականացնել ГОСТ 32869-2014-ի և ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերին համաձայն:<br>• Նախագծային փաստաթղթերը մշակել ՀՀՇՆ 40-01.02 «Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառույցներ» շինարարական նորմերով: | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | • ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 29-ի N 105-Ն հրամանով հաստատված մեթոդական ուղեցույցներով սահմանված պահանջների համաձայն:<br>• Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն:<br>Նախագծային փաստաթղթերի աշխատանքային գծագրերը մշակել ГОСТ 21.701-2013, ГОСТ 21.101-97, ГОСТ 21.501-93 ստանդարտներով սահմանված կանոնների և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի համաձայն:<br>**Մասնակիցը պետք է ունենա նմանատիպ <u>աշխատանքների նախագծանախահաշվային աշխատանքների փաթեթի կազմման համապատասխան ոլորտի լիցենզիա,</u> որը պայմանագիրը կնքելու ժամանակահատվածում պետք է ներկայացնի պատվիրատուին:** | | | | | |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Ակունքի համայնքապետարան
Կոտայքի մ.,Ակունք հ.Կենտրոնական խճ. 72 շ. ՀՎՀՀ 03546083
Բանկը՝ ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան h/h 90010 2575058
Համայնքի ղեկավար՝ Հ. Ռուբենյան

/ստորագրություն/

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան Արշակունյաց 50/1
ՀՎՀՀ 02277374
Բանկը՝Ամերիաբանկ ՓԲԸ
h/h 1570050810520100
Տնօրեն՝ Վ. Կոբելյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2 | 71241200-4 | *Նոր գյուղ բնակավայրի 12-րդ բնակավայրի ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում* | ... % | 150 000 | 150 000 | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 150 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Ակունքի համայնքապետարան
Կոտայքի մ.,Ակունք հ.Կենտրոնական խճ. 72 շ. ՀՎՀՀ 03546083
Բանկը՝ ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան h/h 90010 2575058
Համայնքի ղեկավար՝ Հ. Ռուբենյան

/ստորագրություն/

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան Արշակունյաց 50/1
ՀՎՀՀ 02277374
Բանկը՝Ամերիաբանկ ՓԲԸ
h/h 1570050810520100
Տնօրեն՝ Վ. Կոբեյան

/ստորագրություն/

Կ.Տ